ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

18 հունվարի 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 20 անդամներ:

Բացակա էին՝ Կարեն Աղախանյանը, Թամարա Գրիգորյանը, Լուսինե Գրիգորյանը, Նարինե Իսկանդարյանը, Նարեկ Խաչատրյանը, Դավիթ Հովհաննիսյանը, Լուսինե Ղեվոնդյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին Արմավիրի թեմի առաջնորդ Տեր Սիոն արքեպիսկոպոս Ադամյանը, Արմավիրի մարզպետ Դավիթ Խուդաթյանը, մարզային և համայնքային իշխանությունների, ուժային կառույցների ներկայացուցիչներ:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Վ. Սարգսյանը

Նիստն արձանագրում էր Ն. Դավթյանը

Լսեցին

Օրակարգը հաստատելու մասին

/Զեկ. Վ. Սարգսյան/

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 004-Ա)

Լսեցին

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի երդման արարողություն

/Զեկ. Վ. Սարգսյան/

Օրակարգային հարցի հետ կապված համայնքի նորընտիր ղեկավար Վարշամ Լյովայի Սարգսյանը ամբիոնի մոտից կարդաց Արմավիր համայնքի ղեկավարի պաշտոնը ստանձնելու վերաբերյալ օրենքով սահմանված երդումը (կցվում է), որից հետո դահլիճում հնչեց Հայաստանի Հանրապետության օրհներգը: Օրհնանքի խոսքով հանդես եկավ Արմավիրի թեմի առաջնորդ Տեր Սիոն արքեպիսկոպոս Ադամյանը: Այնուհետև Արմավիրի մարզպետ Դավիթ Խուդաթյանը, շնորհավորելով համայնքի ղեկավարի լիազորությունները ստանձնած Վ. Սարգսյանին, շնորհակալություն հայտնեց Արմավիր համայնքի ավագանու Քաղաքացիական պայմանագիր խմբակցությանը համայնքի ղեկավարի պաշտոնում Վ. Սարգսյանի թեկնածությունն առաջադրելու և ընտրելու համար:

Կարևորելով Վ. Սարգսյանի անցած աշխատանքային ուղին համայնքի կառավարման գործում, նախորդ տարիներին ունեցած փորձը՝ ցանկացավ հաջողություններ, համատեղ գործընկերային արդյունավետ աշխատանք խաղաղ երկնքի տակ:

Լսեցին

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 135-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

/Զեկ. Վ. Սարգսյան/

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 005-Ա)

Լսեցին

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին

/Զեկ. Վ. Սարգսյան/

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 006-Ա)

Լսեցին

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին

/Ձեկ. Վ. Սարգսյան/

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 007-Ա)

Լսեցին

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու մասին

/Ձեկ. Վ. Սարգսյան/

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 008-Ա)

Ավագանու անդամներ

ՎԱՐՇԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԿ ԱԲԳԱՐՅԱՆ

ԱՐՏԱԿ ԱՐՈՅԱՆ

ՀԱՅԿ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԿ ԴՈԼԻՆՅԱՆ

ԱՐՇԱԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԽԱՉԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՂԱՋԱՐՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՏԻՆՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՌՈՄԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՅԿ ՄԵԼԵՔՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԵՐԻՔՆԱԶ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՍՏՂԻԿ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՍՏԵՓԱՆ ՆԱԶԱՐՅԱՆ

ՄԱՄԻԿՈՆ ՇԱՀԻՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՇԻՐՎԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ